ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ԴԻԱՆԱ ՆՈՐԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով փաստաբան **Դիանա Նորիկի Գրիգորյանի (այսուհետ՝ Փաստաբան) (արտոնագիր թիվ 717)** նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիայի (**այսուհետ՝ Ակադեմիա**) ղեկավարի 04.12.2024թ. տեղեկանքի (մուտք՝ 09.12.2024թ. № 3153-24) համաձայն՝ փաստաբան **Դիանա Նորիկի Գրիգորյանը 2024թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս)** ամիսներին չի մասնակցել պարտադիր վերապատրաստման որևէ դասընթացի:

«Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներ են՝ փաստաբանի սահմանված ժամկետում վերապատրաստում չանցնելու վերաբերյալ փաստաբանական ակադեմիայի ղեկավարի ներկայացրած տեղեկանքը:*

Օրենքի մեջբերված դրույթից ակնառու է, որ պարտադիր վերապատրաստում չանցնելու հիմքով կարգապահական վարույթը հարուցվում է Ակադեմիայի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի հիման վրա:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել սույն օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին, բացառությամբ սույն օրենքով կամ փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի,*

Օրենքի 45.12 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է անցնել փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող երկու տարվա ընթացքում քառասունութ ժամից պակաս լինել:*

Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագրք) 2.8.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է Պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել Օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:*

9 հունվարի 2025թ.
թիվ 12-Ա/ԿԳ-25009

Նկատի ունենալով Պալատի խորհրդի կողմից 13.01.2023թ. թիվ 2/5-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման, դրա համար անհրաժեշտ վճարների չափը սահմանելու և վճարելու կարգի» (**այսուհետ՝ Կարգ**) 9-րդ կետի պահանջն առ այն, որ՝ *յուրաքանչյուր կիսամյակի (վեց ամսվա) համար փաստաբանը պետք է անցնի նվազագույնը 12 (տասներկու) ակադեմիական ժամ (այսուհետ՝ ժամ, 1 (մեկ) ակադեմիական ժամը հավասար է 40 (քառասուն) րոպեի) ժամաքանակով (այսուհետ՝ Նվազագույն ժամաքանակով) վերապատրաստման դասընթացներ:*

Նույն կարգի 8-րդ կետի համաձայն՝ *վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են ըստ կիսամյակների, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի: Կիսամյակի հաշվարկը՝ ա) սկսվում է հունվար ամսից և ավարտվում հունիսին (ներառյալ), կամ բ) սկսվում է հուլիս ամսից և ավարտվում դեկտեմբերին (ներառյալ):*

Տվյալ դեպքում, որոշման կայացման պահին՝ 09.01.2025թ-ին, առկա է և՛ կարգապահական վարույթ հարուցելու ***հիմքը*** (*Օրենքի և վարքագծի կանոնագրքի առերևույթ խախտումը՝ վերապատրաստման դասընթացներին չմասնակցելը*) և՛ կարգապահական վարույթ հարուցելու ***առիթը*** (*փաստաբանական ակադեմիայի ղեկավարի ներկայացրած տեղեկանքը*):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, 39-րդ, 39.1-ին հոդվածի, 39.2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և նույն հոդվածի 5-րդ մասի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան Դիանա Նորիկի Գրիգորյանի (արտոնագիր թիվ 717) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով (**կարգապահական գործ թիվ ԿԳ-25009**):

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման պատճենն ուղարկել Փաստաբանին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
առաջին տեղակալ՝ Հարութ Ակլունց

9 հունվարի 2025թ.
թիվ 12-Ա/ԿԳ-25009
ք. Երևան